

# Ն Ա Ի Ա Ս Ա Ա Ր Ռ

## ՄԱՐԶԱԿԱՆ ՅԱԽԵԼՈՒԱԾ ԱԶԳԻԱԿ

Ա. ՏԱՐԻ ԹԻ 8 ՄԱՐՏ 2003

### ՆՈՐ ԱՍՏՂԵՐՈՒ ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔԸ

Վերջին տարիներուն, Հ.Մ.Ը.-Մ.ի ֆուտպոլի եւ պասքեթպոլի կապներուն տեղափոխին դիմաց կարեւոր նուաճումներ արձանագրուեցան անհատական մարզաձեւեր կիրարկող Հ.Մ.Ը.-Մ.ականներու կողմէ՝ փինկ - փոնկի, ճատրակի եւ աթլետիկայի մէջ:

Այս ակնարկին սահմաններէն դուրս կ'իյնայ այս երեւոյթին վերլուծումը, սակայն հարկ է հաստատել այն իրողութիւնը, թէ ի տարբերութիւն խմբային խաղերու, ուր նիւթական հսկայական ներդրումներ հարկաւոր են բարձրագոյն դասակարգին մէջ մրցելու համար, անհատական խաղերը նուազ ծախս կ'ենթադրեն եւ շատ հաւանաբար աւելի լաւ «կը համեմատին» հայու նկարագրին:

Սակայն, արհեստավարժութիւնը հետզհետէ կը ծաւալի Լիբանանի բոլոր մարզաձեւերուն մէջ. եւ Հ.Մ.Ը.Մ.ական ոգիի՛ն վրայ գրաւը դնող եւ գրաւը շահող լիբանանահայր, Հ.Մ.Ը.Մ.ի համակիրը, Հ.Մ.Ը.Մ.ական պատասխանատուն հարկ է գիտակցին, թէ առանց առաւելագոյն չափով տէր կանգնելու մեր մարզիկներուն, (ի՛նչ մարզաձեւայ կիրարկեն անոնք), կարելի պիտի չըլլայ փայլուն յաղթանակներու հասնիլ:

Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարախօսութիւնը վեր է ու վեր պէտք է մնայ առեւտրական նկատառումներէ: Լիբանանահայ նոր սերունդը կարիքը ունի նոր «հերոս»ներու, նոր մարզիկներու, որոնց օրինակին հետեւելու մարմաջով է, որ ան պէտք է տոգորուի եւ ո՛չ միայն օտար մարզիկներ իբրեւ իտէյալ ունենալով հասակ առնէ: Այս մէկը կ'ենթադրէ Հ.Մ.Ը.Մ.ական ոգիի պահպանում եւ այդ, նաեւ տնտեսական զոհողութիւններ:



### Հ.Մ.Ը.Մ. ՊԵՅՐՈՒԹ ՀԱՆԴԻՍԱՅԱԻ ԱԽՈՅԵԱՆ

Լիբանանի փինկ փոնկի տղոց կրտսերներու խմբային ախոյեանութեան աւարտական մրցումին, որ տեղի ունեցաւ անցեալ Շաբաթ օր, Մոն Լա Սալի մէջ, Հ.Մ.Ը.Մ. Պէյրութ 3-1 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Ատապ Ուալ Ռիատա Քաֆարշիման, հանդիսացաւ Լիբանանի կրտսերներու ախոյեան:



### ՄԻԻՉԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ ԱՂԶԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆ

Տեսնել՝ էջ 7

## Formula One World



«Նաւասարդ»ի մեր այս թիւին 4րդ եւ 5րդ էջերով տեսնել «Ֆորմիլա 1»ի նոր տարեշրջանին նուիրուած թղթածրարը:

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

## ԲԱՅՑԻ ԴՈՒԼՑԱՅԵԱՆԻ ՀԵՏ



**ՀԱՐՑՈՒՄ.-** Առաջին անգամ ե՞րբ էլոյթ ունեցար Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբին հետ: Որքան որ ծանօթ ենք, նախքան խումբին միանալը կը գտնուէիր Ֆրանսա: Ի՞նչ էին պատճառները Հ.Մ.Ը.Մ.ի միանալուդ:

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** Առաջին անգամ Հ.Մ.Ը.Մ.ի միացայ 1980ին, փոխանցուելով Հ.Մ.Ը.Մ.ի կրտսերներէն, երբ 15 տարեկան էի: Առաջին անգամ ըլլալով Ա. դասակարգի ախոյեանութեան մրցումս կատարեցի 1981 - 82 եղանակին՝ Իսթիքլալ խումբին դէմ եւ 2 - 1 արդիւնքով յաղթանակ մը արձանագրեցիմք:

1985ին մեկնեցայ Ֆրանսա եւ մաս կազմեցի «Հ.Մ.Ը.Մ. - Ֆրանս»ին, որ փարիզեան շրջանէն ոչ արհեստավարժ խումբ մըն է:

Ապա, փարիզեան կարգ մը խումբերու հետ փորձեր կատարելէ ետք միացայ Դ. դասակարգի կազմերէն Մալաքոֆի, որուն հետ դաշտ ներկայացայ մէկ տարի, անշուշտ իբրեւ հիմնական մարզիկ: Տարի մը ետք, միացայ Վերսայի (Գ. դասակարգ), որուն հետ մնացի երեք տարի:

1 Օգոստոս 1992ին վերադարձայ Լիբանան եւ միացայ Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբին. այդ օրերուն խումբին մարզիչ նշանակուած էր Յովհաննէս Զանազանեան: Հ.Մ.Ը.Մ.ի միանալով, ախոյեանութեան մրցումներուն մասնակցութիւնս բերի 1992 - 93 եղանակէն սկսեալ:

Դժբախտաբար, սակայն, մէկ եղանակ միայն Զանազանեանի ներկայութիւնը վայելեցիմք: Ան մեզի ներշնչեց ինքնավստահութիւն:

**Հ.-** Հ.Մ.Ը.Մ.ի ֆրանսական խումբերուն մաս կազմելէ բացի, ո՞ր խումբերուն շապիկը կրած ես: Արդեօք տարբերութիւն կա՞յ անոնց եւ Հ.Մ.Ը.Մ.ի միջեւ:

**Պ.-** Երկու եղանակ մաս կազմած եմ Սաժէսի (1998 - 1999 եւ 1999 - 2000), իսկ մէկ եղանակ՝ Հ.Մ.Մ.ի (2000 - 2001):

Վստահաբար տարբերութիւն պիտի ըլլար, որովհետեւ առաջին հերթին իմ խմբակիցներս ամբողջութեամբ նորեկ էին: Միջավայրը այդքան ալ տարբեր չէր թէն, բայց խումբին խաղաոճին ընտելանալը արդէն բաւական ժամանակ կ'ենթադրէր:

**Հ.-** Ո՞ր թուականներուն մաս կազմած ես Լիբանանի ֆուտպոլի ազգային խումբին: Տասը տարի առաջ, «Մարզիկ» ամսաթերթը գրած է, որ Լիբանանի ֆուտպոլի ազգային խումբին հերոսներէն եղած ես:

**Պ.-** 1992 - 93 եղանակին մաս կը կազմէի ազգային խումբին: Այդ միջոցին Հ.Մ.Ը.Մ.ի միակ մարզիկն էի, որ ազգային խումբին շապիկը կը կրէի: Մինչեւ 1995 կազմին մէջ էի: Դժբախտաբար, այդ տարի վիրաւորուելով (Անսարի դէմ) հեռու մնացի ազգային խումբէն: Մէկ տարի ետք էր միայն, որ բուժուեցայ եւ հետզհետէ սկսայ վերագտնել երբեմնի կազմաւորումս: Նշենք, թէ այդ օրերուն խումբին մարզիչն էր Ատնան Ծարքի:

**Հ.-** Լիբանանի ֆուտպոլի ազգային խումբին հետ յիշատակելի մրցում մը կամ անմոռանալի կոլ մը նշանակա՞ծ ես արդեօք:

**Պ.-** Ամէնէն յիշատակելի եւ անմոռանալի մրցումը կատարած եմ Սէուլի մէջ (Հարաւային Բորէա), ուր Հնդկաստանի դէմ (1994ի Մոնտիալի զտումի մրցում. Ասիոյ ցամաքամաս) նշանակեցի անմոռանալի կոլ մը, երբ մրցումին արդիւնքը կ'ընթանար 1 - 1 արդիւնքով: Նշանակելով յաղթանակի կոլը (2 - 1) թէն չկրցանք արտասական մրցումներուն տոմս մը ապահովել, սակայն ինձի համար այդ մրցումը մնաց ազգային խումբին հետ իմ անմոռանալի օրերէս մէկը:

**Հ.-** Իւրաքանչիւր մարզիկ խումբին արձանագրելիք յաղթանակին մէջ իր կարեւոր բաժինը ունի կատարելիք:

Նկատի ունենալով, որ այս եղանակին ընդհանրապէս դուն կ'ըլլաս փենալթիները հարուածողները, ի՞նչ կը զգաս երբ գնդակը իր նպատակին չի հասնիր:

**Պ.-** Այս եղանակին, Հ.Մ.Ը.Մ.ի ֆուտպոլի ներկայացուցչական խումբին հետ հարուածած եմ վեց փենալթիներ, որոնցմէ չորսը յաջողած եմ հասցնել իրենց նպատակին:

Եթէ պատահի, որ ձախողիմ, ոչ մէկ ճիգ կը խնայեմ այդ ակամայ սխալս սրբագրելու:

Կը փորձեմ անելի մեծ պատասխանատուութիւն ստանձնել այդ ձախողութենէն ետք եւ կը պայքարիմ կա՛մ կոլ մը նշանակելու, կա՛մ կոլի փոխանցում մը կատարելու համար:

Մեր համակիրները պէտք չէ այպանեն ոեւէ մարզիկ, որովհետեւ ֆուտպոլի աշխարհին մէջ ամէնէն անուանի ֆուտպոլիստներն անգամ շատ յաճախ կը ձախողին փենալթին իրենց նպատակին հասցնել:

**Հ.-** Ներկայիս ինչպէ՞ս կը գտնես խումբին վիճակը, որ Լիբանանի իր պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով մաս կը կազմէ Բ. դասակարգին:

**Պ.-** Ներկայ հանգրուանին խումբին մասին ոչ մէկ ըսելիք կայ: Իւրաքանչիւր մարզիկ լաւապէս պատրաստուած ըլլալով, ըլլա՛յ հոգեպէս, ըլլա՛յ ֆիզիքապէս, իր ամէն կարելին կ'ընէ, որ խումբը վերստին բարձրանայ Ա. դասակարգ, ուր անկասկած անոր իսկական տեղն է:

Բ. դասակարգի ախոյեանութեան մրցումներուն ցարդ պարտութիւն չենք կրած, ինչ որ լաւագոյն ապացոյցն է, որ խումբը վճռած է ամէն գնով բարձրանալ Ա. դասակարգ:

**Հ.-** Ներկայիս ինչպէ՞ս կը գտնես մարզիչ - մարզիկ փոխարարներութիւնները: Արդեօք որեւէ ժամանակ հարց կը ծագի՞:

**Պ.-** Մարզիչ - մարզիկ փոխարարներութիւնները կը գտնուին իրենց լաւագոյն օրերուն մէջ եւ յոյսով եմ, որ այդ մէկը միշտ ալ կը շարունակուի յաջորդ սերունդներուն մօտ ալ:

Հ.Մ.Ը.Մ.ի մարզիչը՝ Վաչէ Սարգիսեան նախապէս եղած է իմ խմբակիցս: Այժմ ան անելի մեծ պատասխանատուութիւն մը կը կատարէ, քան՝ ես: Հակառակ անոր որ նախապէս ան իմ խմբակիցս եղած է, սակայն այժմ մարզիչս ըլլալով՝ կը յարգեմ անոր պաշտօնը եւ ոչ մէկ ատեն կը փորձեմ շրջանցել զինք:

Ոեւէ մարզիկ, որ մաս կը կազմէ Հ.Մ.Ը.Մ.ի, պարտաւոր է ենթարկուելու իր մարզիչին ցուցմունքներուն, շատ յաճախ ինչու չէ նաեւ ընդունելու անոր յանդիմանութիւնները, որովհետեւ միշտ պէտք է ի մտի ունենալ այն բացարձակ իրողութիւնը, որ խումբին միակ ղեկավարն է մարզիչը:

**Հ.-** Համակիրներուն մասին արդեօք ի՞նչ ունիս ըսելիք:

**Պ.-** Իսկապէս Հ.Մ.Ը.Մ.ի համակիրները անմասն են եւ իրենց տեսակին մէջ եզակի: Այս եղանակին իւրաքանչիւր մրցումի ընթացքին փաստուեցաւ, որ անոնք միշտ ալ նեցուկ կը կանգնին խումբին եւ իրենց մարզիկներուն, նոյնիսկ հեռաւոր Խիարայի, Սուրի, Նապաթիէի եւ Պհամտունի մէջ:

Անոնց ներկայութենէն վստահաբար անելի կը խանդավառուին եւ կը քաջալերուին մարզիկները, որոնք ամէն ճիգ ի գործ կը դնեն լաւ արդիւնք արձանագրելու:

**Հ.-** Վերջին հարցում: Արդեօք ի՞նչ ունիս ըսելիք «Ազդակ»ի մարզական ամսաթերթին՝ «Նաւասարդ»ին:

**Պ.-** Առաջին հերթին շնորհակալութիւն կը յայտնեմ «Նաւասարդ»ին, որ այս հարցազրոյցին առիթը տուաւ ինձի:

Կատարուած իւրաքանչիւր հարցազրոյց իսկապէս օգտակար ծանօթութիւններ կու տայ իւրաքանչիւր մարզիկի մասին:

Այն համակիրը, որ մարզիկի մը մասին յաւելեալ մանրամասնութիւններ չունի, «Նաւասարդ»ին ճամբով կը տեղեկանայ:

Նորանոր յաջողութիւններ կը մաղթեմ «Նաւասարդ»ին եւ դարձեալ շնորհակալութիւն այս հարցազրոյցին համար:



## ԱՐՄԷՆ ԵՂԻԱԶԱՐԵԱՆ՝ ԱԽՈՅԵԱՆ. ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ՝ ՏՊԱԽՈՐԵՑ

Ծաբաթավերջին, «Քոմֆորթ» պանդոկի սրահին մեջ վերջ գտաւ Երոպա - Լիբանան ճատրակի բարեկամական մրցաշարքը, որուն իրենց մասնակցութիւնը բերին 18 վարպետներ (Լիբանանի

լաւագոյն 9 վարպետները, ընդդէմ՝ երոպացի վարպետներուն):

Մրցաշարքի ինը հանգրուաններու աւարտին երոպական կազմը յաղթական դուրս եկաւ կէտերու հսկայական առաւելութեամբ: Անգամ մը եւս փաստելով հայրենի ճատրակի վարպետներու գերակայութիւնը: Մրցաշարքի ախոյեան հանդիսացաւ Հայաստանը ներկայացրնող մեծ վարպետ Արսէն Եղիազարեանը, որ արձանագրեց 7 յաղթանակ եւ 2 հաւասարութիւն: 2րդ հանդիսացաւ ալպանացի Քարքանաք Իլիր, իսկ երրորդ՝ եուկոսլաւ Սթեֆան Ծիրիք:

Լիբանանի կազմէն լաւագոյն արդիւնքը արձանագրեց Ահմէտ Նաժժար:

Մրցաշարքին իր մասնակցութիւնը բերող կրտսերագոյն վարպետը եւ իգական սեռի միակ ներկայացուցիչն էր Հ.Մ.Ը.Մ.ական Քնարիկ Մուրատեան, որ արձանագրեց մէկ յաղթանակ եւ չորս հաւասարութիւն (որոնցմէ վերջինը՝ հայրենի վարպետ Եղիազարեանի դէմ): Քնարիկ Մուրատեան այսպիսով եղաւ լիբանանեան կազմէն միջազգային դասաւորման առաւելագոյն կէտեր ապահովողը:

Մրցաշարքի փակման հանդիսաւոր արարողութեան ընթացքին Երոպայի ճատրակի ֆետերասիոնի նախագահ Գագիկ Օհաննէսեան կատարեց մրցաշարքի մասնակիցներուն պարգեւատրումը: Նշենք, որ Օհաննէսեան Լիբանան կը գտնուէր իբրեւ ճատրակի ֆետերասիոնի պատուոյ հիւր եւ համագործակցութեան ծրագիրներ ըննարկեց Լիբանանի մէջ կատարած իր հանդիպումներուն ընթացքին:

## ՄԻԻՉԱՆ ՄՈՒՐԱՏԵԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ ԱՂԶԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆ

Ֆրէրներու ակումբին մէջ տեղի ունեցան Լիբանանի ճատրակի աղջկանց ախոյեանութեան մրցումները, որոնց իրենց մասնակցութիւնը բերին 8 վարպետուհիներ:

Ախոյեանութեան 7 հանգրուաններուն Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր՝ Սիւզան եւ Քնարիկ Մուրատեան ոչ մէկ պարտութիւն կրեցին եւ իրենց միջեւ ճակատումը վերջ գտաւ հաւասարութեամբ: Այսպիսով անոնք ապահովեցին 6,5ական կէտ: Ծշղելու համար Լիբանանի ախոյեանը, երէկ տեղի ունեցան երկու յաւելեալ մրցումներ, որոնց առաջինը վերջ գտաւ հաւասարութեամբ, իսկ երկրորդը՝ Սիւզան

Մուրատեանի յաղթանակով: Այսպիսով, Սիւզան Մուրատեան Լիբանանի աղջկանց ախոյեան հանդիսացաւ 4րդ անգամ ըլլալով (1995, 1999, 2002, 2003): Նշենք, որ միջազգային վարպետ Քնարիկ Մուրատեան ախոյեանութեան տիտղոսին տիրացած է 5 անգամ (1996, 1997, 1998, 2000, 2001):

Յատկանշական էր նաեւ երկու այլ Հ.Մ.Ը.Մ.ականներու՝ Լիբանանի մինչեւ 12 տարեկան աղջկանց երրորդ Մարիա Թոսունեանի, եւ մինչեւ 10 տարեկան աղջկանց փոխ ախոյեան Մեղրի Կիրակոսեանի մասնակցութիւնը: Անոնք թէեւ փայլուն արդիւնքներ չկրցան ար-

ձանագրել աւելի փորձառու վարպետուհիներու դէմ, սակայն անպայման որ յառաջիկայ տարիներուն իրենց մասին խօսիլ պիտի տան: Ստորեւ կը ներկայացնենք ախոյեանութեան վերջնական դասաւորումը.

	ԿէՏ
1.- Սիւզան Մուրատեան	6,5
2.- Քնարիկ Մուրատեան	6,5
3.- Եոսմնա Մախլուֆ	5
4.- Սարա Թորպէյ	3,5
5.- Ղատա Միքաթի	3
6.- Մայա Ժալլուլ	2,5
7.- Մարիա Թոսունեան	1
8.- Մեղրի Կիրակոսեան	-

### ՊԱՍՔԵԹՊՈՒԼ

## Հ.Մ.Ը.Մ. ԱՆԹԻԼԻԱՍ 2002 - 2003 ԵՂԱՆԱԿԸ ԱՒԱՐՏԵՑ ՅՐԴ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Լիբանանի աղջկանց պասքեթպոլի Ա. դասակարգի ախոյեանութեան աւարտին, Հ.Մ.Ը.Մ. Անթիլիաս գրաւեց ընդհանուր դասաւորման երրորդ դիրքը, ապահովելով ֆայնըլ - ֆորի մրցումներուն իր տոմսը:

Իր կատարած տաւր մրցումներուն ընթացքին, Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկները արձանագրեցին վեց յաղթանակ եւ կրեցին չորս պարտութիւն:

Ստորեւ՝ Հ.Մ.Ը.Մ. Անթիլիասի արձանագրած մրցումներուն արդիւնքները.

Ստորեւ՝ վերջնական դասաւորումը.

	Յ.	Պ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԷՏ
1.- Անդրանիկ	9	1	577	370	28
2.- Սաժէս	8	2	679	482	26
3.- Հ.Մ.Ը.Մ.	6	4	581	587	22
4.- Էօ. Էն. Պէ.	4	6	483	548	18
5.- Ռիատի	2	8	405	565	14
6.- Սատաքա	1	9	438	611	11
7.- Սաժէս Պէյրութ	0	0	0	0	0
8.- Պլու Սթարգ	0	0	0	0	0

## Հ.Մ.Ը.Մ. ՊԷՅՐՈՒԹ ԲԱՐԻ ԵՐԹ ՄԱՂԹԵՑ ԻՐ ՄԱՐԶԻՉԻՆ

Փետրուար 14ին Հ.Մ.Ը.Մ. Պէյրութի մասնաճիւղը «Ազատամարտ» ակումբին մէջ յատուկ ընդունելութիւն մը կազմակերպեց բարի երթ մաղթելու համար ճատրակի խումբի մարզիչ Ծահան Եահնիեանի, որ ճամբորդութեան պատճառով մարզիչի իր պաշտօնը յանձնեց Գէորգ Կոստանեանի:

Ընդունելութիւնը առիթ մը եղաւ, որ վարչութիւնը եւ ճատրակի փորձերու հետեւող փոքրիկները իրենց շնորհակալութիւնը յայտնեն եղբ. Եահնիեանին եւ բարի գալուստ մաղթեն նոր մարզիչին:


\*  
\* \*

## Հ.Մ.Ը.Մ.Ի ԿՐՏՍԵՐՆԵՐԸ ԿԸ ՏՊԱԽՈՐԵՆ

Փետրուար 23ին Ֆրէրներու ակումբին մէջ տեղի ունեցած կրտսերներու բարեկամական մրցաշարքին իրենց մասնակցութիւնը բերին երեք Հ.Մ.Ը.Մ.ականներ: Մինչեւ 10 տարեկան տղոց փոխ - ախոյեան հանդիսացաւ Մեղրի Կիրակոսեան: 12էն վար խմբակին մէջ ախոյեան հանդիսացաւ Մարիա Թոսունեան իսկ 16էն վար խմբակին մէջ՝ Յակոբ Թոսունեան:

Նշենք, որ Փետրուարի սկիզբը տեղի ունեցած բարեկամական մէկ այլ մրցաշարքին Մեղրի Կիրակոսեան հանդիսացած էր մինչեւ 10 տարեկաններու ախոյեան:

Այս մրցաշարքերը նախապատուութիւն կը համարուին Լիբանանի պաշտօնական ախոյեանութեան, որ տեղի պիտի ունենայ Մայիսին:



## «ՖՈՐՄՒԼԱ 1» ՆՈՐ ԵՂԱՆԱԿ, ՆՈՐ ՕՐԵՆՔՆԵՐ ԵՒ ՎԵՆԵՐ

«Ֆորմուլա 1»-ը միշտ ալ եղած է մեքենական արագութեան եւ արկածախնդրութեան սիրահարներուն հետաքրքրութեան կեդրոնը եւ միշտ ալ յաջողած է իր տաղանդաւոր վարորդներով, նորանոր թեքնիքներով եւ սուր մրցակցութեամբ հմայել իր համակիրները եւ գրաւել անոնց ուշադրութիւնը: Սակայն, անցեալ եղանակին, Ֆեռարիի եւ մասնաւորաբար Մայքլը Շումպիրի մենատիրութենէն ետք, «Ֆորմուլա 1»-ը կարծէք սկսած է դառնալ միայն Ֆեռարիի համակիրներուն «Ֆորմուլա 1»-ը, իսկ միւս խումբերուն համակիրները կարծէք հետզհետէ սկսած են «հեռանալ», ինչ որ աշխարհի տարածքին պատկերասփիւռի կայաններու միջոցաւ մարգախաղին հետեւողներուն թիր

զգալիօրէն նուազեցուց: Եւ այս մէկուն իբրեւ արդիւնք, ծանուցողներու երաշխաւորները ներկայի տնտեսական վատ պայմաններուն մէջ սկսան նուազ հետաքրքրութիւն ցոյց տալ «Ֆորմուլա 1»-ի հանդէպ:

Այդ դէպքերուն լոյսին տակ, անցեալ եղանակին աւարտին «Ֆորմուլա 1»-ի պատասխանատուներէն Պըրնի Էքլսթըն յայտարարած էր, թէ նման պատկեր մը երբեք պիտի չկրկնուի եւ թէ յառաջիկայ եղանակին (2003) մրցակցութիւնը դարձեալ պիտի վերադառնայ եւ «Ֆորմուլա 1»-ը պիտի վերագտնէ իր անցեալի կենսունակութիւնը: Իրապէս ալ Էքլսթըն եւ Էֆ. Այ. Էյ. ի տնօրէնը՝ Մէքս Մոսլի եղանակին արձակուրդի շրջանին միասնաբար «ձեռնարկեցին» օրէնքներու որոշ փոփոխութեան, որուն նպատակն էր մրցակցութիւնը աւելցնել, արգիլելով հարուստ եւ հսկայ խումբերուն օգտագործած արուեստագիտական բարձր մակարդակի (hi-tech) սարքերն ու թեքնիքները, որոնք միշտ ալ յաղթանակը «կը շնորհէին» նշեալ խումբերու վարորդներուն:

Արդարեւ, Էքլսթընի եւ Մոսլիի ջանքերուն իբրեւ արդիւնք «Ֆորմուլա 1»-ի օրէնքները արմատական փոփոխութիւններ կրեցին ինչ կը վերաբերի կէտերուն, փոխնորդ ինքնաշարժներու գործածութեան, փոլ-փոզիշընին եւ այլ թեքնիք հարցերուն: Առաջին հերթին կէտերու դասաւորումը փոխուեցաւ եւ այս եղանակէն սկսեալ կէտեր պիտի շահին ոչ թէ միայն առաջին 6 դիրքերը գրաւող վարորդները, այլեւ առաջին 8 դիրքերուն տիրացողները, յաջորդաբար 10, 8, 6, 5, 4, 3, 2 եւ մէկ կէտ: Ինչ կը վերաբերի փոլ-փոզիշընին եւ մրցումէն առաջ տեղի ունեցող երկու «Քուալիֆիքէյշըն»-ի մրցումներուն, մրցումին մասնակցութիւնը ապահովելու նախկին պայմանները վերցուեցան եւ յետ այսու իւրաքանչիւր վարորդ միայն մէկ առիթ (այսինքն՝ 3 յաջորդական լէփեր) պիտի ունենայ դուրս գալու իր խումբին կառատունէն եւ իր ժամանակը արձանագրելու, այդ ալ միայն իրեն տրուած ազդանշանէն ետք: Հետաքրքրականը այն է, թէ այն վարորդը, որ իրեն տրուած ազդանշանէն 30 երկվայրկեան ետք դուրս չի գար կառատունէն, իր փորձը կիսատ կը ձգէ եւ կամ կը փորձէ արգելք հանդիսանալ այլ վարորդներու, մրցումը պիտի սկսի վերջին դիրքէն: Նշենք նաեւ, թէ իւրաքանչիւր ինքնաշարժ, որ կ'ամբողջացնէ իր 3 լէփերը, պիտի ենթարկուի թեքնիք քննութիւններու եւ պիտի դրուի «Փարք Ֆերմէ» վիճակի մէջ, մինչեւ Կիրակի օրուան մրցումը: «Փարք ֆերմէ» դրութեան մէջ գտնուող ինքնաշարժներուն վրայ արգիլուած է որեւէ փոփոխութիւն կատարել (բացի անհիւներու պարագային եթէ անհրաժեշտ ըլլայ) եւ իւրաքանչիւր խումբ կրնայ միայն 2 անձ ուղարկել ստուգելու համար իր ինքնաշարժներուն վիճակը: Փոխնորդ ինքնաշարժի պարագային ալ, Էֆ. Այ. Էյ. անոր գործածութիւնը արտօնած է միայն այն պարագային, երբ բուն ինքնաշարժը անգործածելի կը դառնայ, իսկ մրցումէն ետք ինքնաշարժները ծածկելը բացարձակապէս արգիլուած է, բացի եթէ պատճառը մեքենական է:

Այս գլխաւոր փոփոխութիւններուն կողքին Էֆ. Այ. Էյ. ք կատարեց նաեւ այլ փոփոխութիւններ, որոնց մեծամասնութիւնը թեքնիք փոփոխութիւններ են եւ կը նպատակադրեն «Ֆորմուլա 1»-ը դարձնել աւելի հետաքրքրական, մրցակցութեան մէջ ներառելով նաեւ «հասնեստ» խումբեր:

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻԱՒՈՐ  
Գ. ԻՓԷԿԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԸ  
Մ. ԻՇԽԱՆԻ**

### ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐՔԱՆ

ԲԵՏԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ԶՕՀՐԱՊ ԵԱԳՈՒՊԵԱՆ  
ԱՄԵՆ ՈՒՐԱԹ, ԶԱՐԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ  
ՕՐԵՐԸ ԵՐԵՎԱՆԻ ՃԻՇԴ ԺԱՄԸ 8:30ԻՆ,  
«ՅԱԿՈՒ ՏԵՐ ՄԵԼՈՆԵԱՆ»  
ԹԱՏԵՐԱՍՐԱՇԻՆ ՄԵՋ:

ԳԵՐԵՎՈՅԹ՝ ԿԻՐԱԿԻ Կ.Ե. ԺԱՄԸ 4:00ԻՆ

**ՉԼՈՍԻՈՐ ԳԵՐՈՆԵՑՍՈՐՆԵՐ՝  
ԳԵՐՈՐԳ ԳԵՐՈՐԳԵԱՆ, ՊԵՏՐ ՄԵՐՈՐԵԱՆ,  
ՄԵՆ ԳԵՆՏՆԱԿԱՐԵԱՆ, ԹԵՔՆԻԿ ԽՈՐՈՉԵԱՆ  
ՅԱԿՈՒ ՏԵՐ ՅԵՐՈՒԹԻՒՆԵՐԵՆ, ՓՈԼ ՄԻՆԱՍԵԱՆ**

Տոմսերը ստանալ Լաճազգայինի գրախանութն, Զաղզոյեան կեդրոն տիսթրոք ձեռք, Պուրճ Լամուտ - Օպելիքս գրախանութ, Անթիլիաս եւ Ելոյթի օրերը կիշէն:



ԽՈՒՄԲ	ԱՆԻՒՆԵՐ	ՎԱՐՈՐԳՆԵՐ	ՏՆՕՐԷՆ / ՏԷՐ
Ֆեռարի	Պրիմաթոն	Մայքլ Շումպեր (Գերմանիա, 34 տարեկան, թի 1) Ռուպեն Պարիզելլո (Պրագիլ, 31 տարեկան, թի 2)	Ժան Թոտթ
Ուիլիամս Պի. Էմ. Տապլեու	Միշլեն	Խուան Փալյո Մոնթոյա (Քոլումբիա, 25 տարեկան, թի 3) Ռալֆ Շումպեր (Գերմանիա, 28 տարեկան, թի 4)	Ֆրենք Ուիլիամս
Մաքլարեն Մերսեդես	Միշլեն	Տեյվիտ Քուլթարտ (Սկոտլանդ, 32 տարեկան, թի 5) Քիմի Ռայբրենդ (Ֆինլանդիա, 24 տարեկան, թի 6)	Ռոն Տեմիս
Ռեդնո	Միշլեն	Եանո Թրուլիի (Իտալիա, 29 տարեկան, թի 7) Ֆերնանտո Ալոնզո (Սպանիա, 22 տարեկան, թի 8)	Ֆլաիո Պրիաթոր
Սաուպր Փեթրոնաս (Ֆեռարի)	Պրիմաթոն	Նիք Հայտֆիլտ (Գերմանիա, 25 տարեկան, թի 9) Հայնզ - Հարրիտ Ֆրենցըր (Գերմանիա, 36 տարեկան, թի 10)	Փիլիպ Սաուպր
Մորտրեն Հոնտա	Պրիմաթոն	Միան Քարլո Ֆիզիքելլա (Իտալիա, 30 տարեկան, թի 11) Ռալֆ Ֆրենցըր (Անգլիա, 25 տարեկան, թի 12)	Հտի Մորտրեն
Ճակուար Քոզուլլո	Միշլեն	Մարք Ուեպր (Աստրալիա, 27 տարեկան, թի 14) Անթոնիո Փիցոնի (Պրագիլ, 23 տարեկան, թի 15)	Նիքի Լաուտա
ՊԱՐ Հոնտա	Պրիմաթոն	Ժաք Վիլյեմս (Ֆրանսիա, 32 տարեկան, թի 16) Մեյսթր Պարթ (Անգլիա, 23 տարեկան, թի 17)	Տեյվիտ Ռիչչորտո
Մինարտի Քոզուլլո	Պրիմաթոն	Մասթրեն Ուիլյամս (Անգլիա, 25 տարեկան, թի 18) Եոս Վերսթափիլդ (Հոլանդիա, 31 տարեկան, թի 19)	Փոլ Սթոտտարթ
Թոյոթա	Միշլեն	Օլիվիե Փանիս (Ֆրանսիա, 37 տարեկան, թի 20) Քրիսթիանո Տը Մաթթա (Պրագիլ, 30 տարեկան, թի 21)	Օվ Էնտրալդ

Անշուշտ այս փոփոխությունները տարբեր հակազդեցություններ չառաջ բերին «Ֆորմուլա 1»-ի աշխարհին ներս, սակայն մարդ չէր կրնար երեսակայել, թե հարցը կրնայ դուր բանալ Ուիլիամս - Մաքլարեն ընդդեմ Է.Ֆ. Այ. Էյ. վեճի մը, որ նոր եղանակի նախորդակին տակնուվրայ պիտի ընէր «Ֆորմուլա 1»-ի աշխարհը եւ ձեռք մը շուքի տակ պիտի առնէր եղանակի բացման մրցումը, որ տեղի պիտի ունենայ 9 Մարտին Մելպուոնի մէջ, Աստրալիա:


Արդ, «Ֆորմուլա 1»-ի ամենէն հարուստ խումբերէն երկուքը՝ Ուիլիամս եւ Մաքլարեն բաւական տաք եւ սուր վեճի մը մէջ են ֆետերասիոնին հետ նոր օրէնքներուն եւ անոնց ունենալիք ազդեցութեան շուրջ:

Այս երկու խումբերուն տնօրէնները՝ Ֆրենք Ուիլիամս եւ Ռոն Տեմիս կը դատապարտեն Մոսլին իր ամբողջատիրականութեամբ եւ կը յայտնեն, թէ այս վերջինը Ֆեռարիի յառաջխաղացքը կասեցնելու համար քայլեր առաւ, որոնք վարորդներուն ապահովութիւնը կը վտանգեն, եւ այդ պատճառով ալ իրենք այլընտրանք չունին բացի հարցը վերածել

«դատի» մը, ներկայութեամբ միջազգային առետրական գրասենեակին, որ տեղի պիտի ունենայ Լոզանի մէջ, Զուիցերիա:


ՆԱԲԻՆԷ Պ.  
(Շար.ը՝ էջ 6)






## Computer Echo

**Echo PC With The Intel Pentium 4 Processor, The Center Of Your Digital World**




The Sky Is

The Limit



Take Outstanding Digital Photos  
Play Intense 3-D Games  
With Echo PC And  
**The Intel Pentium 4 Processor**



Computer Echo S.a.r.l Lebanon  
Tel 1-488106 (15 lines) Fax 488109  
Cell 734298 / 624714  
e.mail echo@dm.net.lb  
Saloumeh Hyway Ariss Center  
Beirut Lebanon

Echo Dubai L.L.C. UAE  
Khaled Bin Al-Waleed St.  
Mohd Sultan Beishalat Bldg.  
Tel 971-4-3930091 Cell 971-5-4544072  
e.mail echodxb@emirates.net.ae

2001 Intel Corporation, All Rights Reserved, Intel Inside Logos, pentium 4 processor logo and Intel Netburst are trademarks of Intel corporation or its subsidiaries in the united states and other countries. Other brands and trademarks are the property of their respective owners.

# ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՊԱՍՔԵԹՊՈԼ

ՖԱՑՆԵՐԼ-ՍԻՔՍԻ ՄՐՑՈՒՄՆԵՐԸ  
ԿԸ ՍԿՍԻՆ 11 ՄԱՐՏԻՆ

Լիքանանի պասքեթպոլի ֆետերասիոնը շաբաթասկիզբին իր գումարած ժողովին, վաերացնել է տք տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան 18րդ եւ դարձի վերջին հանգրուանի մրցումներուն արդիւնքները, հրապարակեց հետեւեալ որոշումները.

●Ա. ԴԱՍԱԿԱՐԳԷՆ Բ. դասակարգ փոխադրուող երեք խումբերը կը հանդիսանան Ղազիր (8րդ), Քահրապա (9րդ) եւ Սատաքա (10րդ):

●ԸՆԴՀԱՆՈՒՐ դասաւորման 7րդ դիրք գրաւող Սանթրալ փլէյօֆի մրցում պիտի կատարէ Բ. դասակարգի դասաւորման 2րդ դիրքը գրաւող խումբին հետ, Ա. դասակարգ մնալու, կամ՝ Բ. դասակարգ փոխադրուելու համար:

●Ա. ԴԱՍԱԿԱՐԳԻ առաջին վեց դիրքերը գրաւող խումբերը իրենց մասնակցութիւնը պիտի բերեն յառաջիկայ 11 Մարտին սկսելիք ֆայնըլ-սիքսի մրցումներուն: Այդ վեց խումբերն են. Սաժէս, Շանվիլ, Ռիատի, Պլու Սթարգ, Անիպալ Զահլէ եւ Անդրանիկ:

●ԱՂԶԿԱՆՑ բաժակի մրցաշարքին աւարտական ճակատումը տեղի պիտի ունենայ Կիրակի, 9 Մարտին, Ղազիրի դաշտին վրայ, ժամը՝ 17:00ին:

ՍՏՈՐԵՒ՝ ֆետերասիոնին կողմէ հրապարակուած տղոց ընդհանուր դասաւորման վերջնական պատկերը (բոլոր խումբերն ալ կատարած են 18ական մրցում):

	ՅԱՂ.	ՊԱՐՏ.	ՆՇ.	ՍՏ.	ԿԷՏ
1.- Սաժէս	16	2	1782	1438	50
2.- Շանվիլ	15	3	1515	1311	48
3.- Ռիատի	13	5	1601	1370	44
4.- Պլու Սթարգ	11	7	1508	1459	40
5.- Անիպալ	11	7	1444	1401	40
6.- Անդրանիկ	10	8	1544	1518	38
7.- Սանթրալ	4	14	1331	1597	26
8.- Ղազիր	4	14	1258	1495	25
9.- Քահրապա	3	15	1323	1531	24
10.- Սատաքա	3	15	1247	1433	23

## «ՖՈՐՄԱԻԼԱ 1»՝ ՆՈՐ ԵՂԱՆԱԿ...

Շարունակուած՝ 5րդ էջէն

Կը նախատեսուի, որ այս հարցին լուծումը տեւէ մօտ մէկ տարի, մինչ այդ 2003ի «Ֆորմիլա 1»ի ախոյեանութիւնը պիտի հիմնուի Մոսկիի եւ Էքլսթոնի նոր օրէնքներուն վրայ:

Գալով Շումիի, որուն խումբը՝ Ֆեռարի անցեալ եղանակի 17 մրցումներէն 15ին տիրանալով յառաջ բերաւ այս հարցը, այդքան ալ համաձայն չի թուիր ըլլալ այս նոր օրէնքներուն հետ: Ան անցեալ տարի 11 անգամ առաջին հանդիսացած էր, եղանակի աւարտին 6 մրցում մնացած իր 5րդ ախոյեանութեան տիրացած էր եւ Խուան Մանուէլ Ֆաննիոյի մրցանիշին հաւասարելով բոլորած էր «Ֆորմիլա 1»ի իր ասպարէզին լաւագոյն եղանակը: Անդրադառնալով նոր միջոցառումներուն Շումի ըսաւ. ««Ֆորմիլա 1»ի 12 տարուան ասպարէզիս ընթացքին միայն մէկ եղանակ ունեցած եմ անցեալ տարուան պէս, հետեւաբար ինչո՞ւ այս բոլոր խիստ միջոցառումները: Չափազանցած պիտի ըլլայի եթէ ըսէի, թէ նման իրագործում մը դարձեալ կրնանք կատարել, բայց շատ աւելի լաւ պիտի ըլլար եթէ նման միջոցառումներ չորդեգրուէին եւ մենք դարձեալ առիթը ունենայինք գէթ փորձելու կրկնել այդ արդիւնքները»:

Հակառակ Շումիի համեստութեան, սակայն, շատեր՝ որոնց կարգին նաեւ 1992ի ախոյեանը՝ Նայնըլ Մէնսըլ կը հաւատան, որ 34 տարեկան Շումախըրը կասեցնելը անկարելի է, որովհետեւ ան ունի պէտք եղած տաղանդը եւ ճիշդ ախոյեանութեան մը տիրանալու ուժեղ փափաքը, որոնք իրար միանալով գինքը կը դարձնեն անպարտելի եւ այս մէկը այդքան ալ լաւ լուր մը չէ «Ֆորմիլա 1»ի կարգ մը սիրահարներուն համար:

Միւս կողմէ, Մաքլարէնի թիւ 1 վարորդը՝ Տէյվիտ Քուլթարտ այս մէկուն անդրադառնալով ըսաւ, թէ «Ֆորմիլա 1»ի պատմութեան մէջ միշտ ալ եղած են ժամանակաշրջաններ, որոնց ընթացքին կարգ մը խումբեր տիրապետած են քանի մը տարուան համար եւ Ֆեռարի ներկայիս այդ փորձառութիւնն է, որ կ'ունենայ, իսկ Մաքլարէն եւ միւսները իրենց ջանքը կ'ընեն գոցելու համար լայն բացը եւ քսյլ պահելու համար Ֆեռարիի հետ, հետեւաբար այս մէկը պէտք չէ մտահոգութեան դուռ բանայ:

Իր կարգին, միջակ մակարդակի խումբերէն ՊԱՐ Հոնտայի տնօրէնը՝ Տէյվ Ռիչըրտս, որուն խումբին պիտուէն կը հասնի մօտ 176 միլիոն տոլարի, դատապարտեց Ռիչըրտսն ու Տենիսը եւ յայտնեց, թէ այդ դատարանի հարցը բոլորովին աւելորդ էր այնպիսի ժամանակի մը ընթացքին, երբ խումբերն ու ֆետերասիոնը միասնաբար պէտք է

գործակցին «Ֆորմիլա 1»ը վերակենդանացնելու եւ անոր համն ու հոտը վերադարձնելու համար:

Նշենք, թէ 2 շաբաթ առաջ Մոսկի նամակ մը յղած էր Տենիսի եւ Ռիչըրտսի, որուն մէջ ան դատապարտած էր այս երկուքը ԷՖ. Այ. Էյ.ը դատարան կանչելու «յանցանքով» եւ ըսած էր, թէ անոնք շատ լաւ գիտեն, թէ հեռատեսիլի կայաններն ու մարգախաղին երաշխաւորները սկսած են հեռանալ «Ֆորմիլա 1»ի աշխարհէն եւ թէ նման հարցի մը ստեղծումը կրնայ աւելի եւս անհանգստացնել զանոնք, հետեւաբար կարիքը չկար այսքան բարդացնելու հարցը: Ան նաեւ դատապարտեց այս երկուքը, որովհետեւ անոնք կ'ուզեն իրենց հարստութիւնը օգտագործելով մեքենայացնել «Ֆորմիլա 1»ը եւ խօսքը անոնց ուղղելով ըսաւ. «Եթէ իրապէս կը կարծէք, որ «Ֆորմիլա 1»ի սիրահարները կը փափաքին տեսնել մեքենայացած ինքնաշարժներ, որոնք կը կառավարուին անձանօթ մեքենագէտներու կողմէ, կը սխալիք եւ պէտք է վերատեսութեան ենթարկէք ձեր այս կարծիքը»:

Հակառակ այս բոլորին, սակայն Տենիս եւ Ռիչըրտս կը շարունակեն կառչած մնալ իրենց տեսակէտներուն եւ կը շարունակեն յայտարարել, թէ ԷՖ. Այ. Էյ.ի նոր օրէնքները կանխամտածուած չեն եւ ծախսերը կ'աւելցնեն միեւնոյն ժամանակ վտանգելով վարորդներուն ապահովութիւնը, հետեւաբար անոնք վնաս կը հասցնեն «Ֆորմիլա 1»ի աշխարհին:

Նշենք, թէ Ռիչըրտս եւ Մաքլարէն երկրորդ ամենամեծ «Ֆորմիլա 1»ի պիտուէն ունին, որ կը հասնի մօտ 290 միլիոն տոլարի, մինչ Ֆեռարի կը գտնուի առաջին դիրքին վրայ՝ 440 միլիոն տոլարով: Բաղդատաբար ամէնէն աղքատ խումբերն են՝ Ճորտըն (56 միլիոն տոլար) եւ Միներտի (30 միլիոն տոլար):

Ամէն պարագայի սակայն, «Ֆորմիլա 1»ի նոր եղանակը կը սկսի 9 Մարտին եւ բոլորս ալ կը յուսանք, որ Էքլսթոնի եւ Մոսկիի օրէնքները կը յաջողին որոշ չափով վերակենդանացնել «Ֆորմիլա 1»ը: Յիշեցրենք, թէ այս տարի ախոյեանութեան պիտի մասնակցին միայն 10 խումբեր (առանց Արոզի) եւ չորս նոր վարորդներ, որոնք են՝ անգլիացիներ Մասթրըն Ռիլսթըն (Միներտի) եւ Ռալֆ Ֆրըմըն (Ճորտըն), ինչպէս նաեւ պրագիլցիներ Քրիսթիանօ Տը Մաթթա (Թոյոթա) եւ Անթոնիօ Փիցոնի (Ծակուար, Էտի Ըրվայնի փոխարէն):

# ԼՈՒՐԵՐ ՀԱՅՐԵՆԻ ՄԱՐԶԱՇԽԱՐՀԷՆ

## ՖՈՒԹՊՈՒ

● Անցեալ տարի Հայաստանի ֆութպոլի ախոյեանութեան Բ. դիրքը գրաւած Երեւանի «Բանանց»ը Կիպրոսի մէջ մարզումներու հետեւելէ ետք մեկնեցաւ Աշխապատ, մասնակցելու Թուրքմենիստանի նախագահ Սափարմուրատ Նիազով անուան ֆութպոլի մրցաշարքին: Մրցաշարքին իրենց մասնակցութիւնը կը բերեն նախկին խորհրդային եւ Պալթեան երկիրներէ ութ խումբեր, բաժնուած երկու խմբակի:

Իր առաջին մրցումին «Բանանց» Երեւան 1 - 0 արդիւնքով պարտութեան մատնելէ Ղազախստանի Շախթորը, իր երկրորդ եւ Յրդ մրցումներուն 1 - 0 արդիւնքով պարտուեցաւ Պելլոնուսիոյ Նեմանէ եւ Էսթոնիոյ Ֆլորայէն եւ դուրս մնաց մրցաշարքէն:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ ֆութպոլի ֆետերասիոնի նախագահ Ռուբէն Հայրապետեանի որոշումով, Հայաստանի ֆութպոլի ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Աշահակուած Է Երեւանի «Փիւնիկ» ֆութպոլի խումբին գործադիր տնօրէն Արմէն Մինասեանը: Ան փոխարինած է երկար տարիներ այս պաշտօնը վարած Արման Յովհաննիսեանին:

● Հայաստանի ֆութպոլի ազգային խումբին մաս կազմող երկու ֆութպոլիստներ՝ Անտրէյ Մովսիսեան եւ Ալլալթ Սարգսեան, որոնք մաս կը կազմեն յաջորդաբար Սաթուրնի եւ Թորփետո Մեթալուրկի (երկուքն ալ՝ Ռուսիա) յատուկ հրաւերներ ստացած են մաս կազմելու համար զուգերիական Սերվէթ Ժընէ խումբին:

● Հայաստանի ֆութպոլի ազգային խումբին նոր մարզիչ Անդրանիկ Ադամեան, որ իր պաշտօնը ստանձնեց փոխարինելով արժանթիւնի Օսքար Լոփէսը (64 տարեկան), հրապարակեց 25 մարզիկներու անունները, որոնցմէ պիտի ճշդէ ազգային խումբին մաս կազմելիք իր մարզիկները:

54 տարեկան Ադամեան, նախապէս ստանձնած է այս պաշտօնը Ապրիլ 2001էն Յուլիս 2001: Սակայն ան չկարենալով 2002ի Մոնտիալին ազգային խումբին համար տոմս մը ապահովել, ներկայացուց իր հրաժարականը:

Երօ - 2004ի ֆութպոլի մրցաշարքին իր մասնակցութիւնը բերող Հայաստան, որ մաս կը կազմէ Զ. խմբակին, այժմ կը գրաւէ չորրորդ դիրքը, հաւասարութիւն մը եւ պարտութիւն մը կրելէ ետք:

Հայաստանի երրորդ մրցակիցը (Ուքրանիայէն եւ Յունաստանէն ետք) պիտի ըլլայ վերջին դիրքը գրաւող Հիւսիսային Իրլանտա: Մրցումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ Մարտ 29ին՝ Հայաստանի մէջ:

Ստորեւ՝ Ադամեանի կողմէ յայտարարուած մարզիկներուն ցանկը. ԲԵՐԴԱՊԱՀՆԵՐ.- Ռոման Պերեզովսքի (Տինամօ Մոսկուա) եւ Արմէն Համբարձումեան (Մարէկ Տուպնիցա, Պուլկարիա):

ՅԵՏՍԱՊԱՀՆԵՐ.- Սարգիս Յովսէփեան (Զենիթ Ս. Փեթերսպորկ), Յարութիւն Վարդանեան (Եանկ Պոյզ), Արթուր Մկրտչեան, Խոսէ Անտրէ Պիլիպիոն, Վախթանգ Յակոբեան («Փիւնիկ» Երեւան), Կարէն Տոխոյեան (Բրիլիա Սովիէթով Սամարա), Արմէն Պետիկեան («Միքա» Աշտարակ), Տիգրան Եազանչեան (Տիոկենէս Մորֆու, Կիպրոս) եւ Ալեքսանտր Թադէոսեան («Երեւան» Արարատ):

ՄԻՋՆԱՊԱՀՆԵՐ.- Արթուր Պետրոսեան (Եանկ Պոյզ), Համլէթ Մխիթարեան (Թատամոն Սուր), Ռոմիկ Խաչատրեան (Ափոէլ, Կիպրոս), Արթուր Ոսկանեան (Տիոկենէս), Ալլալթ Սարգսեան (Թորփետո Մոսկուա), Եղիշէ Մելիքեան (Մեթալուրկ Տոնէթցք), Կարէն Ալեքսանեան («Շիրակ» Գիւմրի), Վարդան Մինասեան, Աղուան Մկրտչեան եւ Էդուարդ Փարցիկեան («Փիւնիկ» Երեւան):

ՅԱՌԱՋԱՊԱՀՆԵՐ.- Արտաւազ եւ Արման Բարամեան (Փանակայիքի, Յունաստան), Անտրէյ Մովսիսեան (Սաթուրն) եւ Արմէն Շահկէլտեան (Նէա Սալամիճա, Կիպրոս):

Արտիոմ Խաչիկբեկով հանդիսացաւ Ռուսիոյ ախոյեան:

## ԹԵՆԻՍ

● Զուգերիացի հայազգի թենիսիստներն Մարի - Գայիանէ Միքայէլեան, իր մարզումի ծախսերուն համար նիթական հատուցում պահանջած է Զուգերիոյ թենիսի ֆետերասիոնէն: Սակայն ֆետերասիոնը մերժած է օժանդակել, պատճառաբանելով, թէ անձնական մարզումներու ծախսերու չ'օժանդակել: Մարի - Գայիանէ Միքայէլեանի մարզիչը իր հայրն է՝ Յարութիւն Միքայէլեան:

Նշենք, թէ Մարի - Գայիանէ Միքայէլեան Զուգերիոյ թիւ երկու թենիսիստներն է Փետրա Շնայտըրէն ետք:

● Հայաստանի լաւագոյն թենիսիստ Սարգիս Սարգսեան չ'ուզեր մաս կազմել Հայաստանի ազգային խումբին, որովհետեւ կ'ուզէ միայն անհատական մրցաշարքերու մասնակցիլ:

Յառաջիկայ Ապրիլին տեղի ունենալիք Եու. Էս. Օփընի իր մասնակցութիւնը բերող Սարգսեան, երկրորդ տարին ըլլալով հեռու կը մնայ ազգային խումբէն:

## ԱԹԼԵԹԻԶՄ

● ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ կայացած աթլէթի մրցաշարքին, Հայաստանէն Արսէն Սարգսեան մէկ քայլ ոստումի մրցումներուն գրաւեց Յրդ դիրքը, արձանագրելով 6,96 մ. արդիւնք, իսկ 60 մ. վազքի մրցումներուն Արտիուշա Սիմոնեան գրաւեց չորրորդ դիրքը 60 մետրի տարածքը կտրելով 7 երկվայրկեանէն:

● ՀԱՅԱՍՏԱՆԻ աթլէթի հաւաքականը իր մասնակցութիւնը պիտի բերէ 12 - 17 Մարտ 2003ին Անգլիոյ Պիթսիմիսթ քաղաքին մէջ կայանալիք աթլէթի ախոյեանութեան:

## ՔԱՐԱԹԷ

● ՌՈՒՍԻՈՅ մէջ տեղի ունեցող քարաթի կրտսերներու ախոյեանութեան բաց մրցաշարքին, երկու տարբեր դասակարգերու մէջ, երկու հայ մարզիկներ յաջողեցան երկու առաջնութիւններու տիրանալ:

12էն 14 տարեկան մրցումներուն, Արա Պաղտասարեան պարտութեան մատնելով իր բոլոր մրցակիցներն ալ հանդիսացաւ առաջին (40 քկ. դասակարգ): Իսկ թեթեւ կշիռքի մրցումներուն ախոյեան հռչակուեցաւ Կարպ Ստեփանեան:

## ԴԱՀՈՒԿԱՐՇԱԻ

● ՄՈՍԿՈՒԱՅԻ մէջ սկսաւ դահուկարշաի երիտասարդներու ախոյեանութեան մրցաշարքը, մասնակցութեամբ՝ 500 մարզիկ-մարզիկուհիներու:

17 տարեկան եւ վար դասակարգին մէջ առաջին դիրքը գրաւեց Էտուարդ Մարգարեան: Անոր արձանագրած այս յաղթանակը ապագային նկատմամբ մեծ յոյսեր կը ներշնչէ, որ ան կրնայ այլ մրցաշարքերու ալ լաւ արդիւնքներ արձանագրել:

## ԾԱՏՐԱԿ

● Հայաստանի Հանրապետութեան նախագահական ընտրութիւններուն նուիրուած ճատրակի վեթերաններու մրցաշարքը աւարտեցաւ ի նպաստ Վարդէս Մխիթարեանի, որ աւարտական հանգրուանին պարտութեան մատնեց Ռոպէրթ Կոստանեանը 1,5 - 0,5 արդիւնքով: Յրդ դիրքը գրաւեց Վ. Բաբայեան:

## ՆՇԱՆԱՌՈՒԹԻՒՆ

● Ռուսիոյ մէջ կայացած ատրճանակի Աշահակուածի մրցումներուն, 1996ի Աթլանթայի Ողիմպիական խաղերու ախոյեան հայազգի



# ՄԱՐԶԱԿԱՆ ԱՇԽՈՒԺ ԳՈՐԾՈՒՆԷՆՈՒԹԻՒՆ ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻՆ ՄԷՋ



Հայկազեան համալսարանի մարզական գործունեությունը հետզհետեւ առաւել աշխուժ կը դառնայ, աշխուժութիւն մը, որ կ'արտացոլայ ե՛ր ներհամալսարանական մարզական կեանքին վրայ, ե՛ր միջհամալսարանական մրցաշարքերու ընթացքին:

Համալսարանը արդէն ունի պասքեթպոլի աղջկանց եւ տղոց, ֆութպոլի, փինկ փոնկի, լողի, քիք - պոքսինկի եւ ճատրակի խումբեր: Վերջերս կազմուեցաւ նաեւ համալսարանի թենիսի խումբը:

Հայկազեան համալսարանի մարզական աշխատանքներու պատասխանատու Սահակ Պիտինեան, համագործակցաբար տարբեր մարզաձեւերու ներկայացուցիչներուն հետ, անցնող ամիսներուն կազմակերպած է շարք մը ներհամալսարանական մրցաշարքեր, որոնց կարգին մինի ֆութպոլի (աւելի քան 80 ուսանողներու մասնակցութեամբ), սթրիթպո-



լի (2 տղայ եւ 1 աղջիկէ բաղկացած խումբերով) եւ փինկ փոնկի մրցաշարքեր, որոնց աւարտին արժէքաւոր նուէրներ տրամադրուած են մրցանակակիրներուն:

Համալսարանի մարզական խումբերը օժտուած են արհեստավարժ մարզիչներով: Յովսէփ Լոշխաճեան (պասքեթպոլ - տղաք), Սանան Մարգարեան (պասքեթպոլ - աղջիկներ), Փօլ Գոճաւազեան (ֆութպոլ), Նունէ Սագապետոյեան (լող) եւ Մոհամէտ Մհայտլի (թենիս) կը մարզեն Հայկազեան համալսարանի խումբերը շաբաթը երկու անգամ հերթականութեամբ, եւ արհեստավարժ դաշտերու վրայ, ինչպէս Ալէք Մանուկեան կեդրոնի պասքեթի եւ թենիսի դաշտերը, Ժտէլյտէի ֆութպոլի դաշտը եւ Լիբանանի Ամերիկեան համալսարանի լողաւազանը:

Ուսանողական տարուան առաջին կիսամեակին Հայկազեան համալսարանի մարզիկները արձանագրեցին շարք մը միջհամալսարանական եւ համալիբանանեան տարողութեամբ նուաճումներ: Հայկազեանի քիք պոքսինկի խումբը, որ նշեալ մարզաձեւի Լիբանանի ֆետերասիոնի մօտ արձանագրուած է իբրեւ մարզական ակումբ, տիրացաւ Լիբանանի քիք - պոքսինկի ակմբային ախոյեանութեան եւ Ապրիլին Լիբանանը պիտի ներկայացնէ Յունաստանի մէջ տեղի ունեցող աշխարհի ախոյեանութեան:

Համալսարանի ճատրակի խումբը, որ անցնող տարիներուն հնձած է մեծ թիւով տիտղոսներ, նոյնպէս յաջող արդիւնքներ արձանագրեց Փետրուարին տեղի ունեցած միջհամալսարանական ճատրակի մրցաշարքին, ուր տղոց մրցումներուն Քնարիկ Մուրատեան 5 կէտով առաջին դիրքը բաժնեց երկու այլ վարպետներու հետ, եւ աղջկանց մրցաշարքին նոյնպէս հանդիսացաւ ախոյեան:



Փինկ փոնկի միջ համալսարանական մրցաշարքին Դալար Գնտոյեան հանդիսացաւ Յրդ:

Համալսարանի մարզական միւս խումբերը նոյնպէս արձանագրած են լաւ արդիւնքներ եւ յաղթական դուրս եկած կարգ մը բարեկամական մրցումներու ընթացքին, սակայն անոնց կարեւորագոյն մրցաշարքերը տեղի պիտի ունենան յառաջիկային:

Մարզիկներու պատրաստութեան համար համալսարանը կը կազմակերպէ նաեւ մար-



զական հաւաքներ, որոնց առաջինը եղաւ համալսարանի աղջկանց պասքեթի խումբին ետօրեայ հաւաքը, ուր անոնք օրական 4 ժամ փորձերու հետեւեցան եւ ներկայ գտնուեցան թեքնիք հարցերու շուրջ մարզիչներու տուած դասախօսութիւններուն: Յառաջիկային, համալսարանի մարզական բոլոր խումբերը պիտի մեկնին Սուրիա, ուր պիտի ունենան բարեկամական մրցումներ:

«Նաւասարդ» նորանոր յաջողութիւններ կը մաղթէ Հայկազեան համալսարանի մարզական խումբերուն: